

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԱՇՁԲ-10/5-1**

ք. Երևան

10.07.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինաշ-28» ՍՊԸ-ն (որը հանդես է գալիս համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրով «Նեմրուք» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 06900909) հետ), ի դեմս ընկերության տնօրեն Ա. Եփրեմյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները (համաշինարարական աշխատանքներ)** (այսուհետ՝ աշխատանք), իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է մինչև **20.12.2019թ.**: Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով՝ համաձայն հաստատված թերությունների ակտերի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի, պատրաստվածքների և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի անդամ հանդիսացող «Նեմրուք» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 06900909) հետ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իրենց ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ պայմանագրին և ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից թխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օրը**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները պայմանագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր առավելագույն գինը կազմում է **305,348,500** (երեք հարյուր հինգ միլիոն երեք հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որից **50,891,416.67** (հիսուն միլիոն ութ հարյուր իննսունմեկ հազար չորս հարյուր տասնվեց ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ**, որտեղ՝

**ՄԳ-ն** ընտրված մասնակցի առաջարկած ընդհանուր գինն է, որը կազմում է **24,948,000** (քսանչորս միլիոն ինը հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

**ՆԳ-ն** Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված ծավալաթերթ-նախահաշվի «ԸՆԴԱՄԵՆԸ»-ը տողում նշված գինն է, որը կազմում է **29,441,225** (քսանինը միլիոն չորս հարյուր քառասունմեկ հազար երկու հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

**ԾԳՏ-ն** Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված ծավալաթերթ-նախահաշվի՝ ըստ առանձին տողերի համար սահմանված միավորի գինն է՝ գումարած ԱԱՀ-ն:

**Ծ-ն** կատարողական ակտերով ներկայացված՝ Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված ծավալաթերթ-նախահաշվի առանձին տողերի ծավալն է:

**ՎԳՏ-ն** Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված ծավալաթերթ-նախահաշվի առանձին տողերի դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՎԱՐԵԼԻ ՌԻՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱժՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն

պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Քանի որ պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի կնքելու միջոցով «Նեմրոփ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 06900909) հետ, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 34 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲ վարչությունը:

### 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


#### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ք. Երևան, Բազրևանդի 5  
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011117034  
ՀՎՀՀ 02522157  
ՀՀ պաշտպանության նախարարության կազմակերպչական



#### ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինաշ-28» ՍՊԸ  
ք. Չարենցավան, 3-րդ թաղամաս, 31 շենք, բն. 1  
«Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ  
Հ/Հ 220433330317000  
ՀՎՀՀ 03023292  
Տնօրեն



ԵՐԵՎԱՆ

ԾԱՎԱՆՔԵՐԹ-ՆԱՄԱՀԱՇԻԿ  
ԾԵՆՔԵՐԻ, ԵՐԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՏԻԿ ՆՈՐԴՄԵՆ ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԻ (ՀԱՄԱԸՆԴՐՈՒՄԿԱՆ ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը և CPV կոդը	Հիմնավորումը	Աշխատանքներ / առանց նյութերի պատրաստվածքների և սարքավորումների/	Չափման միավորը	Միավորի գինը՝ հազար ՀՀ դրամ
1	2		3	4	6
	<b>Ծեփերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ (Համաշինարարական աշխատանքներ) CPV կոդ՝ 45461100/1</b>				
1		Կ1-1671 11-15	Գրունտի մշակում էքսկավատորով, կողիցք, շերտի տարրությունը 0,5խմ, գրունտ 3 կարգ	100մ <sup>3</sup>	73.563
2		Կ1-1672 11-16	Գրունտի մշակում էքսկավատորով, կողիցք, շերտի տարրությունը 0,5խմ, գրունտ 4 կարգ	100մ <sup>3</sup>	95.877
3		Կ1-1673 11-17	Գրունտի մշակում էքսկավատորով, կողիցք, շերտի տարրությունը 0,5խմ, գրունտ 5 կարգ	100մ <sup>3</sup>	131.39
4		Կ1-1696 22-16	Գրունտի մշակում էքսկավատորով, բարձելով ինքնաթափ մեքենաների վրա, շերտի տարրությունը 0,5 խմ, գրունտ 4 կարգ	100մ <sup>3</sup>	120.963
5		Կ1-1604	Հողային աշխատանքների կատարում թափոնակույտում, ավտոտրանսպորտով տեղափոխման ժամանակ 2-3-րդ կարգի գրունտներ	100մ <sup>3</sup>	4.522
6		Կ1-1605	Հողային աշխատանքների կատարում թափոնակույտում, ավտոտրանսպորտով տեղափոխման ժամանակ 4-րդ կարգի գրունտ	100մ <sup>3</sup>	4.917
7		Կ1-1606	Հողային աշխատանքների կատարում թափոնակույտում, ավտոտրանսպորտով տեղափոխման ժամանակ 5-6-րդ կարգի գրունտներ	100մ <sup>3</sup>	11.957
8		Կ1-1718 30-7	Գրունտի մշակում մինչև 228կվտ (310ծ.ու) հզորության բուլդոզերով, տեղափոխելով այն մինչև 10մ, 3 կարգի գրունտ	100մ <sup>3</sup>	13.353
9		Կ1-1719 30-8	Գրունտի մշակում մինչև 228կվտ (310ծ.ու) հզորության բուլդոզերով, տեղափոխելով այն մինչև 10մ, 4 կարգի գրունտ	100մ <sup>3</sup>	51.779
10		Կ1-1723 30-12	Ավելացնել ամեն հաջորդ 10մ բուլդոզերով տեղափոխելու համար /1;2 և 3-րդ կարգի գրունտներ/	100մ <sup>3</sup>	9.811
11		Կ1-1724 30-12	Ավելացնել ամեն հաջորդ 10մ բուլդոզերով տեղափոխելու համար /4-րդ կարգի գրունտ/	100մ <sup>3</sup>	21.257
12		Կ1-1727 31-3	Խրամուխների և փոտրակների ետիցք մինչև 59կվտ (80ծ.ու) հզորության բուլդոզերով, տեղափոխելով մինչև 5մ, գրունտ 3 կարգ	100մ <sup>3</sup>	11.855
13		հաշվ. գ=0,5	Ժայռագրունտի փլուզում մեխանիզացված եղանակով, գրունտ 4p-րդ և 5p-րդ /կազմաբանություն/ կարգի	մ <sup>3</sup>	7.086
14		հաշվ. գ=0,7	Ժայռագրունտի փլուզում մեխանիզացված եղանակով, գրունտ 5-րդ կարգի	մ <sup>3</sup>	9.92
15		հաշվ. գ=0,8	Ժայռագրունտի փլուզում մեխանիզացված եղանակով, գրունտ 6-րդ կարգի	մ <sup>3</sup>	11.337
16		հաշվ. գ=1,0	Ժայռագրունտի փլուզում մեխանիզացված եղանակով, գրունտ 7-րդ կարգի	մ <sup>3</sup>	14.171
17		Կ1-961	Գրունտի մշակում ձեռքով խրամուխների՝ մինչև 2մ խորությամբ, առանց ամրակապման, թեքություններով, և փոսերի փորում մինչև 1,5մ խորությամբ, 3 կարգ գրունտներում	մ <sup>3</sup>	2.281
18		Կ1-962	Գրունտի մշակում ձեռքով խրամուխների՝ մինչև 2մ խորությամբ, առանց ամրակապման, թեքություններով, և փոսերի փորում մինչև 1,5մ խորությամբ, 4 կարգ գրունտներում	մ <sup>3</sup>	4.023

19	Կ1-965	Փոսերի փորում ձեռքով կանգնակների և սյուների համար մինչև 0,7մ խորությամբ 3 կարգ գրունտներում	մ³	4.251
20	Կ1-966	Փոսերի փորում ձեռքով կանգնակների և սյուների համար մինչև 0,7մ խորությամբ 4 կարգ գրունտներում	մ³	7.631
21	Կ1-967	Ետլիցք ձեռքով կոշտուկների փխրեցումով ու տոփանումով խրամուղիների, փտորակների և փոսերի 1 կարգ գրունտներում	մ³	0.871
22	Կ1-968	Ետլիցք ձեռքով կոշտուկների փխրեցումով ու տոփանումով խրամուղիների, փտորակների և փոսերի 2 կարգ գրունտներում	մ³	0.954
23	Կ1-969	Ետլիցք ձեռքով կոշտուկների փխրեցումով ու տոփանումով խրամուղիների, փտորակների և փոսերի 3 կարգ գրունտներում	մ³	1.161
24	Կ27-33	Անֆայտբետոն ծածկույթների քանդում	100մ³	438.347
25	Կ27-124 կիրառ գրունտ: ԳԲ՝ 0,237	Անֆայտբետոն ծածկույթների ակոսահատում	100մ	66.121
26	Կ27-30	Սալարկների քանդում	մ³	2.005
27	Կ27-31	Խճախի ծածկույթների քանդում	100մ³	57.083
28	Կ27-32	Հանքաձյուղով սողորկած խճախի ծածկույթների քանդում	100մ³	76.955
29	Կ27-34	Ցեմենտ-բետոն ճանապարհի ծածկույթների քանդում	100մ³	268.196
30	Կ46-78	Ե/բետոն հիմքերի քանդում	մ³	84.186
31	Կ46-79	Քարե պատերի քանդում	մ³	13.389
32	Կ46-85	Միաշերտ, երկշերտ վահանակային, փայտե, գիպակարտոնե միջնորների քանդում	100մ²	54.831
33	Կ46-94	Կախովի արաստաղների քանդում իր հիմնավախով	100մ²	72.597
34	Կ46-96	Տանիքի ծածկույթի քանդում թեթևախի պողպատից	100մ²	10.412
35	Կ46-100	Բետոնե հատակների քանդում	մ³	13.256
36	Կ46-122 կիրառ	Պատուհանների, բացվածքների փայտյա, մետաղապատե, այլմիսնե լրացումների ապամոնտաժում, պատուհանագրգերով	100մ²	217.31
37	Կ46-123 կիրառ	Պատուհանների, բացվածքների փայտյա, մետաղապատե, այլմիսնե լրացումների ապամոնտաժում, արանց պատուհանագրգերի	100մ²	200.307
38	Կ46-124 կիրառ	Դռների, բացվածքների փայտյա, մետաղապատե, այլմիսնե լրացումների ապամոնտաժում	100մ²	128.146
39	13-5 կիրառ	Հատակների և պատերի կերամիկական ալիկների երեսապատման քանդում	100մ²	62.207
40	Կ46-149	Երկհարկանի, կարկասային շենքերի վերգետնյա մասի քանդում մինչև 50000իսմ ծավալով	100մ³	47.899
41	Կ46-(156-158) կիրառ	10-39նմ տրամագծով, 200նմ խորությամբ ուղղաձիգ անցքերի գայլկոնում կատցաստարներում այնատային օղան գայլկոններով, սարեցնող հեղուկի օգտագործմամբ	100 հատ	80.509
42	Կ46-(172-174) կիրառ	Ավելացնել կամ պակասեցնել ամեն 10նմ խորության փոփոխման 10-39նմ տրամագծով անցքերի համար	100 հատ	0.812
43	Կ46-(159-163) կիրառ	40-69նմ տրամագծով, 200նմ խորությամբ ուղղաձիգ անցքերի գայլկոնում ե/բետոնե կատցաստարներում այնատային օղան գայլկոններով, սարեցնող հեղուկի օգտագործմամբ	100 հատ	92.133
44	Կ46-177 կիրառ	Ավելացնել կամ պակասեցնել ամեն 10նմ խորության փոփոխման 40-69նմ տրամագծով անցքերի համար	100 հատ	2.896
45	Կ46-(164-167) կիրառ	70-109նմ տրամագծով, 200նմ խորությամբ ուղղաձիգ անցքերի գայլկոնում կատցաստարներում այնատային օղան գայլկոններով, սարեցնող հեղուկի օգտագործմամբ	100 հատ	111.765

46	Կ46-180;181;182;183 կիրառ.	Ավելացնել կամ պակասեցնել ամեն 10մմ խորության փոփոխման 70-109մմ տրամագծով անցքերի համար	100 հատ	5.268
47	Կ46-(168-169) կիրառ.	110-139մմ տրամագծով, 200մմ խորությամբ ուղղաձիգ անցքերի գայլիկներում կառուցատարրերում այնատային օղան զայլիկներով, սառեցնող հերուկի օգտագործմամբ	100 հատ	120.563
48	Կ46-(184-185) կիրառ.	Ավելացնել կամ պակասեցնել ամեն 10մմ խորության փոփոխման 110-139մմ տրամագծով անցքերի համար	100 հատ	8.411
49	Կ46-(170-171) կիրառ.	140-160մմ տրամագծով, 200մմ խորությամբ ուղղաձիգ անցքերի գայլիկներում կառուցատարրերում այնատային օղան զայլիկներով, սառեցնող հերուկի օգտագործմամբ	100 հատ	136.366
50	Կ46-(186-187) կիրառ.	Ավելացնել կամ պակասեցնել ամեն 10մմ խորության փոփոխման 140-160մմ տրամագծով անցքերի համար	100 հատ	9.663
51	Կ46-(188-190) կիրառ.	20-39մմ տրամագծով, 200մմ խորությամբ հորիզոնական անցքերի գայլիկներում ե/բետոնե կառուցատարրերում այնատային օղան զայլիկներով, սառեցնող հերուկի օգտագործմամբ	100 հատ	103.174
52	Կ46-(204-206) կիրառ.	Ավելացնել կամ պակասեցնել ամեն 10մմ խորության փոփոխման 20-39մմ տրամագծով անցքերի համար	100 հատ	1.877
53	Կ46-(191-195) կիրառ.	40-69մմ տրամագծով, 200մմ խորությամբ հորիզոնական անցքերի գայլիկներում կառուցատարրերում այնատային օղան զայլի կոններով, սառեցնող հերուկի օգտագործմամբ	100 հատ	141.624
54	Կ46-(208-211) կիրառ.	Ավելացնել կամ պակասեցնել ամեն 10մմ խորության փոփոխման 40-69մմ տրամագծով անցքերի համար	100 հատ	2.51
55	Կ46-(196-199) կիրառ.	70-109մմ տրամագծով, 200մմ խորությամբ հորիզոնական անցքերի գայլիկներում կառուցատարրերում այնատային օղան զայլի կոններով, սառեցնող հերուկի օգտագործմամբ	100 հատ	189.834
56	Կ46-(212-215) կիրառ.	Ավելացնել կամ պակասեցնել ամեն 10մմ խորության փոփոխման 70-109մմ տրամագծով անցքերի համար	100 հատ	3.721
57	Կ46-(200-203) կիրառ.	110-160մմ տրամագծով, 200մմ խորությամբ հորիզոնական անցքերի գայլիկներում կառուցատարրերում այնատային օղան զայլի կոններով, սառեցնող հերուկի օգտագործմամբ	100 հատ	270.244
58	Կ46-(216-206) կիրառ.	Ավելացնել կամ պակասեցնել ամեն 10մմ խորության փոփոխման 110-160մմ տրամագծով անցքերի համար	100 հատ	4.855
59	Կ46-35	Ավարի հեռացում քարե պատերից և առաստաղներից	100մ <sup>2</sup>	19.344
60	Կ46-37	Ավարի հեռացում քարե և բետոնե պլաներից և որմնասյուներից	100մ <sup>2</sup>	26.808
61	Կ46-38	Բացվածքների իրականացում խամբարաբետոնե կառուցատարրերում	մ <sup>3</sup>	18.395
62	Կ46-40	Բացվածքների իրականացում քարե կառուցատարրերում	մ <sup>3</sup>	21.946
63	Կ46-43	Բջիկների բացում քարե պատերում 130*130մմ չափի	հատ	0.917
64	Կ46-57	Ակոսների փորում մինչև 20քմ կտրվածքով քարե պատերում	100մ	36.065
65	Կ46-60	Ավելացվում է ամեն 20քմ-ի համար 100քմ-ից ավել կտրվածքի դեպքում /Կ46-59 կետին/	100մ	25.712
66	Կ9-123 կիրառ զ=0,6; 0,7	Պողպատե կառուցատարրերի ապամոնտաժում	տն	45.059
67	շուկա	Ամբարձիչ մեքենայի, կրունկի ծառայություն	ժամ	5.11
68	23-77 զն.3	Ապամոնտաժված նյութերի, շին աղբի և ավելացված բնահողի կուտակում, բարձուն ձեռքով ինքնաթափ մեքենաները և տեղափոխում, մինչև 1կմ	տն	3.014
69	զն.3	Ապամոնտաժված նյութերի, շին աղբի և ավելացված բնահողի տեղափոխում, մինչև 1կմ	տն	0.92
70	զն.3	Ավելացնել քաջուցիչ 1կմ տեղափոխման համար (միավորի արժեքը x հեռավորության երկարության հետ: Մ/արժեքx(n-1), որտեղ n-ը կուտակվողի բարձուն տեղից մինչև թափոնատեղը ընկած տարածության երկարությունն է կմ-ով)	տն	0.17

71	Կ11-(1-2) կիրառ.	Գրունտի խտացում խճով, կոպիճով և գլաքարերով /գրունտի համահարթեցում, ջրցանում, խճի փռում; համահարթեցում; ներտեղում; ծախսը՝ խիճ/կուպիճ/ 40-70մմ չափաբաժնի- 4,08խմ/	100մ <sup>2</sup>	10.775
72	Կ11-3	Սախապատրաստական շերտի պատրաստում ավազից, առանց նյութի արժեքի /գրունտի համահարթեցում, ջրցանում; ավազի փռում; հարթեցում; խտացում; ծախսը՝ - 1,12խմ/	մ <sup>3</sup>	3.359
73	Կ11-4	Սախապատրաստական շերտի պատրաստում խարամից, առանց նյութի արժեքի /գրունտի համահարթեցում, ջրցանում; խարամի փռում; հարթեցում; խտացում; ծախսը՝ - 1,25խմ/	մ <sup>3</sup>	3.007
74	Կ11-6 կիրառ	Սախապատրաստական շերտի պատրաստում խիճ /գլաքար, կոպիճ/, առանց նյութերի արժեքի խառնուրդով /գրունտի համահարթեցում, ջրցանում; մանրախճի և քարի փշրանքի փռում խճի վրա և խտացում; ծախսը՝ խիճ/գլաքար, կոպիճ/ 20-40մմ չափաբաժնի - 0,97խմ, մանրախճի - 0,09խմ; քարե փշրանք-0,18խմ/	մ <sup>3</sup>	7.385
75	Կ11-11	Սախապատրաստական շերտի պատրաստում Կ7,5 դասի բետոնից առանց բետոնի արժեքի /խտացում; ծախսը՝ ծանր բետոն - 1,02խմ/	մ <sup>3</sup>	3.359
76	Կ6-20	Բետոնե ժապավենային հիմքերի իրականացում խտացումով, առանց նյութերի արժեքի /խտացում; բետոն 1,02խմ; ծախսը՝ փայտ 0,0039խմ; կարգապարամած 0,803քմ/	մ <sup>3</sup>	5.803
77	Կ6-21	Սամբարաբեռոնե ժապավենային հիմքերի իրականացում խտացումով, առանց նյութերի արժեքի /ծախսը՝ բետոն 0,71խմ; փայտ 0,0101խմ; խամբար 0,44խմ; կարգապարամած 0,918քմ/	մ <sup>3</sup>	5.959
78	Կ6-15	Բետոնե հիմնային տախիակ սայլերի /հարթակների/ իրականացում խտացումով, առանց նյութերի արժեքի /ծախսը՝ բետոն 1,02խմ; փայտ 0,008խմ; կարգապարամած 0,0754քմ/	մ <sup>3</sup>	2.236
79	Կ6-30	Բետոնե հիմքերի իրականացում խտացումով, սարքավորումների տակ առանց արժեքի / ծախսը՝ բետոն 1,02խմ; փայտ 0,036խմ; կարգապարամած 1,16քմ/	մ <sup>3</sup>	8.94
80	Կ6-91	Սամբարաբեռոնե հենապատերի իրականացում խտացումով, առանց նյութերի արժեքի /ծախսը՝ բետոն 0,71խմ; հեղույս մանեկ 0,9կգ; խամբար 0,44խմ; փայտ 0,0165խմ; կարգապարամած 0,717քմ/	մ <sup>3</sup>	5.273
81	ՀԼ-Լժ6-15 կիրառ	Ամրանային պողպատից շինվածքների, ցանցերի, ներդիր էլեմենտների պատրաստում և տեղադրում բետոնե կառուցատարրերի կարգապարամածների մեջ առանց նյութերի արժեքի (ծախսը՝ ամրան, ցանց 1,0տ - 1,01; 1,02տ; պողպատե ամրակապ 1,0տ- 4կգ)	տ	44.84
82	Կ6-166	Ե/բետոնե գուղիների իրականացում խտացումով, առանց բետոնի և ամրանի արժեքի /բետոն 1,015 խմ; ծախսը՝ բետոն 1,015 խմ; էլեկտրոդ 2,5կգ; փայտ 0,0145խմ; կարգապարամած 1,4քմ/	մ <sup>3</sup>	13.792
83	Կ6-170	Ե/բետոնե բարավորների իրականացում խտացումով, առանց բետոնի և ամրանի արժեքի /ծախսը՝ բետոն 1,015 խմ; էլեկտրոդ 2,3կգ; փայտ 0,0378խմ; կարգապարամած 2,9քմ/	մ <sup>3</sup>	20.093
84	Կ6-173	Ե/բետոնե անհեծան ծածկերի իրականացում խտացումով, առանց բետոնի և ամրանի արժեքի /ծախսը՝ բետոն 1,015խմ; փայտ 0,0366խմ; կարգապարամած 1,37քմ/	մ <sup>3</sup>	12.318
85	Կ6-177	Կողավոր ե/բետոնե ծածկերի իրականացում խտացումով, առանց բետոնի և ամրանի արժեքի ծախսը /բետոն 1,015 խմ; էլեկտրոդ 2,5կգ; փայտ 0,0589 խմ; կարգապարամած 2,29քմ/	մ <sup>3</sup>	20.783
86	Կ27-86 կիրառ	Բետոնե և բազալտե եզրաքարերի (նայթեղերի) տեղադրում բետոնե Կ15 դասի հիմքի վրա; հողային արկրի պատրաստում հիմքի համար, բետոնե հիմքի իրականացում խտացումով, կարգապարամածի տեղադրում և ապամնտածում, եզրաքարերի տեղադրում հարկարատարումով, կարունների լցում գծամշակումով, առանց նյութերի արժեքի /ծախսը՝ եզրաքար 1գծ; բետոն 0,04*- 0,06խմ; ց/ա շաղախ 0,0006խմ/	մ	1.252
87	Կ15-77 կիրառ	Պատերի, աստիճանների և աստիճանահանակատների երեսապատում բազալտե, տուֆե, անդեզիտե, ֆերոգիտե, գրանիտե և մարմարե սալերով, խարսխավորումով կամ առանց խարսխավորմամբ, 1գծ-ում մինչև 6 հատ /ծախսը՝ երեսապատման սայլեր 1,01 քմ, պողպատե Փ1,8-3մմ ամրակապեր՝ փաստացի ծախսով կգ; ց/ա շաղախ 0,02խմ/	մ <sup>2</sup>	7.912

88	Կ27-19	Նախապատրաստական և հարթեցնող շերտի իրականացումը ավագից առանց նյութերի արժեքի, ներքնաշերտի համահարթեցում և տոփանում, ավագի ցրում-հարթեցում, գլորում՝ պնեկմատիկ դրոբերով 18,0տ և 25,0տ և ցրում /ձախար՝ ակազ 1,1խմ, ցուր 0,05խմ/	մ <sup>3</sup>	0.871
89	Կ27-22-1	Նախապատրաստական և հարթեցնող շերտի իրականացում խճուկ, առանց նյութերի արժեքի, ներքնաշերտի համահարթեցում, տոփանում, խճի ցրում հարթեցում, գլորում՝ հարթ թեփուկներով 6,5տ և 10,0տ; պնեկմատիկ դրոբերով 18,0տ և ցրում /ձախար՝ խիճ 1,26խմ, ցուր 0,07խմ/	մ <sup>3</sup>	2.817
90	Կ27-164	Աճալորեռուն տաք խառնուրդներից մեկ շերտով ծածակույթի իրականացում 4սմ հաստ, առանց աճալորեռունի արժեքի (հիմնատակի մաքրում, ա/բ խառնուրդի փոում աճալորափոփոցներով, եզրերի կտրատումով, տոփանում գլորման համար անմատչելի տեղերում, գլորում (6.5 և 10տ) նմուշահատերի արտահատում և տեղերի լցափակում) /ձախար՝ ըստ ա/բետոնի տիպի և մակնշի, խտացված վիճակում 9,11-9,74տն/	100մ <sup>2</sup>	20.46
91	Կ27-165	Ցուրաքայտի 0,5սմ շերտի հաստության փոփոխման համար ամելացնել կամ պակասացնել առանց աճալորեռունի արժեքի /ձախար՝ ըստ ա/բետոնի տիպի և մակնշի, խտացված վիճակում 1,14-1,21տն/	100մ <sup>2</sup>	0.006
92	Կ27-29-1, Կ27-29-2	Հարթեցնող շերտի իրականացում ա/բետոն խառնուրդներով առանց աճալորափոփոցների, առանց աճալորեռունի արժեքի (հիմնատակի մաքրում, ա/բ խառնուրդի փոում, եզրերի կտրատումով, տոփանում գլորման համար անմատչելի տեղերում, գլորում 6.5տ և 10տ, նմուշահատերի արտահատում և տեղերի լցափակում) /ձախար՝ ա/բետոն՝ 1,0տ-1,01տ/	տ	2.448
93	Կ27-251	Ճանապարհային հանքաձյուղի լցաքաշխում, առանց հանքաձյուղի/փոտումային էնուլիսի/ արժեքի /ձախար՝ 1,03տ/	տ	7.494
94	Կ6-309	Ծանր Կ7.5; 12.5;15;20;22.5 դասի բետոնի պատրաստում տեղում առանց բարդորիչների արժեքի /ձախար՝ խիճ 0,8խմ; ցուր 0,21խմ, ակազ 0,58;0,57;0,53;0,5;0,47 խմ; ցնեմտ Մ400 դասի /CEM-II/A-P, 42,5N/ 214;235;286;332; 382 կգ/	մ <sup>3</sup>	5.257
95	Կ6-318 կրատ	Թեթև Կ5;7.5;12.5 դասի բետոնի պատրաստում տեղում առանց բարդորիչների արժեքի /ձախար՝ խիճ (ձավալային կշիռը մինչև 1500կգ/տ) 0,89խմ; ցուր 0,32խմ, ակազ (ձավալային կշիռը մինչև 1500կգ/տ) 0,54 խմ; ցնեմտ Մ400 դասի /CEM-II/A-P, 42,5N/255;286;317 կգ/	մ <sup>3</sup>	4.84
96	Կ6-336 կրատ	Ցնեմտային/ցնեմտակրային/ շարվախի Կ7,5; 12,5;15 դասի պատրաստում տեղում առանց բարդորիչների արժեքի /ձախար՝ ակազ 1,21; 1,16; 1,12 խմ; ցնեմտ Մ400 դասի/ 304;416;499 կգ, ցուր 0,32խմ, /	մ <sup>3</sup>	4.334
97	Կ8-165 17-1	Միջնորմներ գիպսե սալերից, մեկշերտ, մինչև 100սմ հաստ, հարկի բարձրությունը մինչև 4մ, առանց նյութերի արժեքի /ձախար՝ փայտ 0,1խմ; գիպս-սալիքատար 0,57տ; կալածք 8կգ; սմրան մինչև Փ10սմ 0,013տ, տղ ցրմ; ակազ 0,6խմ; սալեր 10սմ հաստ. 0,91քմ/	100մ <sup>2</sup>	140.155
98	Կ8-140 15-1	Պատերի շար թեթև բետոն բարդորիչ/բլոկներից/ կարանների գծանշակումով, հարկի բարձրությունը մինչև 4մ, առանց նյութերի արժեքի /ձախար՝ բետոն բլոկ 0,92խմ, ց/ա շարվախ 0,11խմ/	մ <sup>3</sup>	7.012
99	Կ8-150	Թեթև բետոն բլոկների դատարկությունների ցում թեթև լցանյութով, 1սմ շարի համար մինչև 0,25խմ լցանյութ, առանց լցանյութի արժեքի	մ <sup>3</sup> /շար/	2.37
100	Կ8-59 7-3	Պատերի և այլ կառուցատարների շարվածքի ամրանակրում մետաղական ցանցերով, ամրաններով և մետաղալարերով, առանց նյութերի արժեքի	տ	62.346
101	Կ8-60 7-4	Կառուցատարների ամրանում պողպատե ամրակապերով	տ	50.874
102	Կ8-161 16-6	Պատերի և սյուների տվորական շարվածք կրպիտ կտր. տափ բարձրությունը մինչև 4մ, առանց նյութերի արժեքի /ձախար՝ տափե քար կրպիտ կտր. 0,92խմ /52,5հատ/ ց/ա շարվախ 0,21խմ/	մ <sup>3</sup>	8.795

103	Կ8-163 16-7	Պատերի և սյուների մաքուր շարվածք կանտոնավոր ձևի տուֆ բարերից, հարկի բարձրությունը մինչև 4մ, առանց նյութերի արժեքի /ձախար՝ տուֆե բար 0,92խմ, ց/ա շարվածք 0,18խմ/	մ³	9.25
104	Կ34-343 կիրառ	Միջնորոմների հիմնակմայից երեսապատում, փայտատաշերտային, փայտաթեթվային, գիպասավարաթեթ, նրբատախտակե, սայերով մեկ կողմից, մեկ շերտ /առանց նյութերի արժեքի/	մ²	1.052
105	Կ34-322 կիրառ	Կախումի առատարձների փայտե, մետաղական հիմնակմայի պատրաստում /առանց նյութի արժեքի/	մ²	3.047
106	Կ34-354 կիրառ	Կախումի առատարձների հիմնակմայից երեսապատում պլասմանե, փայտատաշերտային, փայտաթեթվային, գիպասավարաթեթ, նրբատախտակե, սայերով մեկ շերտ /առանց նյութի արժեքի/	մ²	1.342
107	Կ34-343 գ=0,7 կիրառ	Պատերի հիմնակմայից երեսապատում պլասմանե, փայտատաշերտային, փայտաթեթվային, գիպասավարաթեթ, նրբատախտակե սայերով մեկ շերտ /առանց նյութի արժեքի/	մ²	0.737
108	Կ9-232 կիրառ. հաշվ.	Դողպատե կառուցատարրերի պատրաստում և մոնտաժում /առանց նյութերի արժեքի/	տ	123.985
109	Կ9-125 կիրառ. հաշվ. գ=2	Մետաղական դրան պատրաստում իր շրջանակով և պարագաներով /առանց նյութերի արժեքի/	տ	320.749
110	Կ9-240 կիրառ	Մետաղական դրան տեղադրում /առանց արժեքի/	մ²	5.322
111	Կ10-114 կիրառ	Դռների տեղադրում միջնորմներում և պատերում փայտե և երեսապատված փայտանյութերով, պլումինե, մետաղապատե /առանց դրան՝ իր շրջանակով, արժեքի/	մ²	3.903
112	Կ10-113 կիրառ	Միջնորմների/վիտրաժ/ տեղադրում պլումինե, մետաղապատե /առանց միջնորմի պատրաստվածքի արժեքի/	մ²	2.256
113	7-62	Պարակայլների տեղադրում /առանց արժեքի/	մ	0.083
114	Կ10-74 Կ10-75 կիրառ	Պատուհանների տեղադրում փայտե, պլումինե, մետաղապատե /առանց պատուհանի՝ իր շրջանակով, արժեքի/	մ²	3.776
115	Կ10-102 Կ10-103	Պատուհանագրգերի տեղադրում փայտե, պլասմանե, պլումինե, առանց նյութերի արժեքի /ձախար՝ պատուհանագրգ 1,05 զմ, ցեմենտե շաղպա 0,005խմ; գիպս-սիլիքատաղ 4,3կգ/	մ	1.142
116	Կ11-55;57; 67;69; 75; 79; 80 հաշվ.	Հարթեցնող շերտի, բետոնե ծածկույթների պատրաստում ցեմենտային շաղպայով, տարբեր դասի և տեսակի բետոններով 20մմ հաստ. առանց նյութերի արժեքի /խտացումով, ձախս՝ ցեմենտե շաղպա/բետոն/ (ձախար՝ 2,2խմ)	100մ³	83.678
117	Կ11-56;58; 68; 70; 76; 81; 82 հաշվ.	Ամեն հաջորդ ցեմենտե շաղպակի, բետոնի շերտի փոփոխման դեպքում ավելացնել կամ պակասեցնել առանց նյութի արժեքի /ձախս՝ ցեմենտե շաղպա/բետոն/ (ձախար՝ 0,5լիմ)	100մ³	10.107
118	Կ11-73	Բետոնե և ցեմենտային ծածկույթների լրացուցիչ ամրացում ցեմենտով առանց ցեմենտի արժեքի /ձախս՝ ցեմենտ 0,06տ/	100մ³	20.727
119	Կ15-92 կիրառ	Հատակների և պատերի ծածկույթի պատրաստում արժևուտակյան երեսապատման սալիկներից սալիկի տսիճով, ներառյալ շրիշակները (առանց նյութերի արժեքի) /ձախս՝ սալիկ 102քմ; սալիկի տսիճ 350կգ/	100մ²	266.011
120	Կ11-16 կիրառ	Ջրամեկույցի շերտի իրականացում, 1 շերտ գլանափաթեթային /իզոգամ, ձախար՝ 1քմ-1,12քմ/, առանց նյութերի արժեքի	100մ²	92.899
121	Կ11-17 կիրառ	Ամեն հաջորդ ջրամեկույցի շերտի համար ավելացնել, գլանափաթեթային /իզոգամ, ձախար՝ 1քմ-1,12քմ/, առանց նյութերի արժեքի	100մ²	47.114
122	Կ11-47 կիրառ	Ջրամեկույցի շերտի իրականացում մաձկունով /ցահարթեցումով/ 1շերտ 2մմ հաստ., առանց նյութի արժեքի	100մ²	56.112
123	Կ11-48 կիրառ	Ամեն հաջորդ ջրամեկույցի մաձկունով /ցահարթեցումով/ շերտի համար ավելացնել, առանց նյութի արժեքի	100մ²	15.624

124	Հ-ԼԺ 11-3	Ծածկույթի իրականացում լամինացված մանրատախտակով պատրաստի հիմնատակի վրա, ծախսանկյալից միջնաշերտի իրականացմամբ /ծախս՝ 104քմ/ առանց նյութերի արժեքի	100մ²	92.457
125	Կ11-273	Փայտե, լամինացված և պլոմբերային շրիշակների տեղադրում /առանց արժեքի/	100մ	17.477
126	Կ11-63 կիրառ	Տախտակների տեղադրում ծածկի տարի կամ բետոնե հատակների վրա, հականեխիչով մշակված /առանց նյութի արժեքի/	մ²	0.329
127	Կ11-184, 185, 186	Ծածկույթի պատրաստում տախտակե, հականեխիչով մշակված և իրկված /առանց նյութերի արժեքի/	մ²	1.129
128	Կ11-187	Ծածկույթի պատրաստում փայտանյութ սալերով /առանց նյութերի արժեքի/	մ²	0.557
129	Կ11-198	Ծածկույթի պատրաստում մանրատախտակից /առանց նյութերի արժեքի/	մ²	1.637
130	Կ15-285	Պատերի մակերևույթների քերթատում	100մ²	41.472
131	Կ15-275	Պատերի մակերևույթների համառարած հարթեցում (մեկշերտանի սկադ) /առանց շարվախի արժեքի; ծախս՝ 2աղախ 0,6խմ/	100մ²	46.122
132	Կ15-260	Պատերի, սյուների և որմնասյուների հասարակ սկադ շարվախով /առանց շարվախի արժեքի; ծախս՝ 2աղախ 1,5խմ/	100մ²	98.05
133	Կ15-262 կիրառ	Պատերի, սյուների և որմնասյուների բարելավված սկադ շարվախով /առանց շարվախի արժեքի; ծախս՝ 2աղախ 1,87խմ/	100մ²	119.378
134	Կ15-264 կիրառ	Պատերի, սյուների և որմնասյուների բարձրորակ սկադ շարվախով /առանց շարվախի արժեքի; ծախս՝ 2աղախ 2,5խմ/	100մ²	182.8
135	Կ15-279	Ներքևի լուսանոտառավերի և դժվարանաչելի տեղերի սկադում /առանց շարվախի արժեքի; ծախս՝ 2աղախ 3,5խմ/	100մ²	388.144
136	Կ15-210	Ճակատների, փնջև 200մմ լայնության հարթ շեփույթների բարձրորակ սկադում շարվախով /առանց շարվախի արժեքի; ծախս՝ 2աղախ 0,67խմ/	100մ	40.242
137	Կ15-212	Ճակատների, 200մմ-ից ավել լայնության հարթ շեփույթների բարձրորակ սկադում շարվախով /առանց շարվախի արժեքի; ծախս՝ 2աղախ 1,06խմ/	100մ	67.095
138	Կ15-275-1	Պատերի մակերևույթների համառարած հարթեցում (մեկշերտանի սկադ) /առանց գաջի արժեքի; ծախս՝ գաջ 0,72տ/	100մ²	74.986
139	Կ15-242-1	Պատերի, սյուների և որմնասյուների հասարակ սկադ գաջով /առանց գաջի արժեքի; ծախս՝ գաջ 2,17տ/	100մ²	135.607
140	Կ15-246-1	Պատերի, սյուների և որմնասյուների բարելավված սկադ գաջով /առանց գաջի արժեքի; ծախս՝ գաջ 2,41տ/	100մ²	160.873
141	Կ15-250-1	Պատերի, սյուների և որմնասյուների բարձրորակ սկադ գաջով /առանց գաջի արժեքի; ծախս՝ գաջ 3,25տ/	100մ²	245.814
142	Կ15-277-1	Պատուհանների և դռների տափակ շեփույթների սկադ գաջով /առանց գաջի արժեքի; ծախս՝ գաջ 3,07տ/	100մ²	343.671
143	Կ15-286	Առաստաղների մակերևույթների քերթատում	100մ²	49.766
144	Կ15-276-1	Առաստաղների բետոնե մակերևույթների համառարած հարթեցում (մեկշերտանի սկադ) /առանց գաջի արժեքի; ծախս՝ գաջ 0,84տ/	100մ²	87.228
145	Կ15-243-1	Առաստաղների բետոնե մակերևույթների հասարակ սկադ գաջով /առանց գաջի արժեքի; ծախս՝ գաջ 2,17տ/	100մ²	156.342
146	Կ15-247-1	Առաստաղների բետոնե մակերևույթների բարելավված սկադ գաջով /առանց գաջի արժեքի; ծախս՝ գաջ 2,65տ/	100մ²	196.946
147	Կ15-251-1	Առաստաղների բետոնե մակերևույթների բարձրորակ սկադ գաջով /առանց գաջի արժեքի; ծախս՝ գաջ 3,37տ/	100մ²	273.979

148	Կ15-293-1	Աստիճանաբայտերի և հարթավանդակների բետոնե մակերևույթների բարձրորակ սվաղ գաջով, անսրբալիճանների և հեծանների հարդարումով, ձգանոթով /առանց գաջի արժեքի: Ճախս՝ գաջ 6,24տ/	1000 <sup>2</sup>	478.283
149	Կ15-296	Պանելային առաստաղների մակերևույթների հարդարում շտրպիով ներկման կամ պատտառապատման համար /առանց շտրպիի արժեքի: Ճախս՝ շտրպի 0,06խմ/	1000 <sup>2</sup>	12.512
150	Կ6-344 կիրառ	Հարդարման համար 1:3 հարաբերության ծանր ցեմենտային շարժիչի պատրաստում առանց բաղադրիչների արժեքի /Ճախսը՝ ավազ 1,12 խմ: ցեմենտ 418 կգ/	0 <sup>3</sup>	4.334
151	Կ15-658 կամ Կ15-659	Պատերի և առաստաղների հասարակ ներկում ջրանոսպիտն, լատեքսային, ճակատային ներկով սվաղի և ներկման համար պատրաստված կառուցատարրերի վրա /առանց նյութերի արժեքի: Ճախսը ներկ 30կգ: ձեխամաձիկ 5,5կգ/	1000 <sup>2</sup>	20.425
152	Կ15-660	Պատերի բարելավված ներկում ջրանոսպիտն: լատեքսային, ճակատային ներկով սվաղի վրայով /առանց նյութերի արժեքի: Ճախսը ներկ 36կգ: ձեխամաձիկ 51կգ/	1000 <sup>2</sup>	50.966
153	Կ15-661	Առաստաղների բարելավված ներկում ջրանոսպիտն: լատեքսային, ճակատային ներկով սվաղի վրայով /առանց նյութերի արժեքի: Ճախսը ներկ 36կգ: ձեխամաձիկ 55կգ/	1000 <sup>2</sup>	63.333
154	Կ15-662	Պատերի բարելավված ներկում ջրանոսպիտն: լատեքսային, ճակատային ներկով ներկման համար պատրաստված կառուցատարրերի վրայով /առանց նյութերի արժեքի: Ճախսը ներկ 36կգ: ձեխամաձիկ 5կգ/	1000 <sup>2</sup>	31.341
155	Կ15-663	Առաստաղների բարելավված ներկում ջրանոսպիտն: լատեքսային, ճակատային ներկով ներկման համար պատրաստված կառուցատարրերի վրայով /առանց նյութերի արժեքի: Ճախսը ներկ 36կգ: ձեխամաձիկ 6կգ/	1000 <sup>2</sup>	35.547
156	Կ15-664	Պատերի բարձրորակ ներկում ջրանոսպիտն: լատեքսային, ճակատային ներկով սվաղի վրայով /առանց նյութերի արժեքի: Ճախսը ներկ 36կգ: ձեխամաձիկ 79կգ/	1000 <sup>2</sup>	85.728
157	Կ15-665	Առաստաղների բարձրորակ ներկում ջրանոսպիտն: լատեքսային, ճակատային ներկով սվաղի վրայով /առանց նյութերի արժեքի: Ճախսը ներկ 36կգ: ձեխամաձիկ 92կգ/	1000 <sup>2</sup>	110.67
158	Կ15-551	Ներկման համար նախապատրաստված պատերի հասարակ յուղաներկում սվաղի և հավաքովի կառուցատարրերի վրայից /առանց նյութերի արժեքի: Ճախսը յուղաներկ 26,7կգ, օլիՖ 10,3կգ, մաձիկ 5կգ/	1000 <sup>2</sup>	24.439
159	Կ15-561	Պատերի բարելավված յուղաներկում փայտի վրայից /առանց նյութերի արժեքի: Ճախսը յուղաներկ 25,8կգ, օլիՖ 9,1կգ, մաձիկ 38կգ/	1000 <sup>2</sup>	67.668
160	Կ15-562	Առաստաղների բարելավված յուղաներկում փայտի վրայից /առանց նյութերի արժեքի: Ճախսը յուղաներկ 29,8կգ, օլիՖ 10,0կգ, մաձիկ 41կգ/	1000 <sup>2</sup>	84.372
161	Կ15-563	Հատակների բարելավված յուղաներկում փայտի վրայից /առանց նյութերի արժեքի: Ճախսը յուղաներկ 25,0կգ, օլիՖ 11,6կգ, մաձիկ 54կգ/	1000 <sup>2</sup>	60.371
162	Կ15-585	Դռների լրացրանների բարձրորակ յուղաներկում փայտի վրայից /առանց նյութերի արժեքի: Ճախսը յուղաներկ 24,6կգ, օլիՖ 3,0կգ, մաձիկ 56կգ/	1000 <sup>2</sup>	182.401
163	Կ15-587	Պատերի բարձրորակ յուղաներկում սվաղի վրայից /առանց նյութերի արժեքի: Ճախսը նախաներկ 7,5կգ, յուղաներկ 18,4կգ, օլիՖ 11,9կգ, մաձիկ 79կգ/	1000 <sup>2</sup>	100.109
